

ဒ ဂ ဒ ဟ င

Նրենսդր. փակ սրգաւորի ֆոդերով,
Կընոջ մը պէս որ երագեց յաղթանակ,
Կը սպասես միշտ երջանկութեան սեմին ֆով,
Որ պըսակէ ըզգեզ վաղուան արեգակ:

Ու վաղը միշտ, ո՞վ ըստասում անըստառ,
Որուն համբան միշտ մուշին մեջ կ'երկարի,
Կը պլպլելայ ճրագ մ'հեռուն դողահար
Այնքան աղօտ որ աստղի պես կը մարի:

Ու տարածած քեւերըդ միշտ գալիքին
Յառա՛ջ, յառա՛ջ, կ'աղաղակես հեգ մարդուն,
Հագիւ հասած յաղթանակի արձանին

Ետ կը վանէ քեզ անգուր ոյժ մը քաֆուն,
Բայց չես ընկնիր մարտիրոսի պէս արի,
Օրերուն հետ կը մտնես նոր պայաֆարի:

February, 1942

0 1 5

Կարթիս վերայ սերբս դրի որպէս խայծ,
Եւ զայն յոյսիս քելին կապած,
Արշաւասոյր ժամանակի
Յորճանքին մէջ խաղաղօրէն ճըգեցի :

Ու երբ անյոյս դուրս փաշեցի զայն յանկարծ,
կարթիս վըրայ արիւնոտած
Սիրտ մը ծանօթ, սիրտ մը կարօտ,
Կը տըրտվէր սիրոյ դողով կենսայորդ:

Մօքբը սիրտն էր որ կարքիս վրայ ինձ համար,
Քընարի պէս կը բքբըռար:
Ա՛յս, իմ սիրոյս որսը միակ,
Մօքբս անգուն, սիրտն է անհուն, անյատակ:

Հարկայ

ԱՂՕԹՔ ԳԵՂԵՑԻԿ ԱԶՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տէր իմ, կրկին քեզ կը դիմեմ գերդ քերթող
Տո՛ւր գեղեցիկ աչքեր այս հեղ մարդկութեան,
Որ ողջունէ բերկրութեամբ լո՛յսը զարթող,
Ու չըջըցին այնտեղ ամպեր տրտմութեան :

Մեղրի նըման ըլլան անոնք անարատ
Մեղման անոյշ որ անգուր՝ մահն իսկ յուզեն,
Խորունկ ըլլան հորիզոնի պէս անգայտ
Որ արեւներն այնտեղ ծագիլ երազեն:

Ծաւի բլլան, երեմոսի պէս մըքիւն,
Տէր, դու գիտես տալ ամէնուն իր շքնորհն,
Դու միայն դիր ձեռքերովդ շող մը նրբին,

Երբ կը ծագին մօր մը ծոցին մէջ աղուոր:
Մի՛ քողեմք որ զանոնք մարէ գերեզման,
Այլ լոյսէ լոյս յաւերժօրէն քեզ դառնան:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՐԵՎՆԻ ՎԱՆՔԸ


Այժբմ հո՛ն է վրկայասէ՛րբ Գըրիգոր,
Արեգնի վանքն՝ առաւօտի շողն առաջին
Իր համրոյրով արթնցուցեր է ծերունին՝
Որուն հոգին հայրենաճայն ծով մի՛: անդորր:

Կամարներուն տակ ըստուերոտ եւ լուսաւոր
 ևն կ'աղօթէ. շարականի մը ծաղկումին
 նկնոտ վարդե'րը շրթներուն վրայ կը քօշնին,
 Մինչ կուրծքին վրայ յաչաճես եւ ճեռքերն անոր:

Կ'աղօթէ որ Արեգնի վաճիքը փրցըւած
Հայաստանի սրտէն, յաւերժ տրոփէ հըգօր,
Եւ պըսակուի Սեւ ու Մըթին լեռն օր քան զօր

Պայծառագեղ, իր ծոցին մէջ խաւարամած՝
Ուր մըմնջուն գետի մը ձայնը կը հասնի
Հնչակելով ինչ որ սուրբ է եւ հայրենի...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



ՕՐՈՒԱՆ ԳՐԹԵՐ

ՀԱՅՅԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ. — Գրեց՝
Սիսակ Յակոբ Վարժապետեան: Տպ. Պէյ-
րուք, 1951, էջ ԺԶ + 500, մեծութիւն
18x24:

Արշակ Այլօյաճեանի, Արտաշէս Գար-
տաշեանի, Գէորգ Մըսրէլեանի եւ Արտա-
ւազդ Արքեպս. Սիւրմէեանի ուսումնասի-
րութիւններէն եւ ստուար հատորներէն
վերջ, նկատմամբ Եզիպտոսի եւ Սիւրիոյ
հայ զապութին պատմութեան եւ ականա-
ւոր դէմքերուն, ահա՛ նաեւ ուրիշ պատ-
կանքի երկ մը, որ կու գայ կարծէք լը-
րացնելու Մեքճաւոր Արեւելքի հայ զա-
պութներու պատմութիւնը:

Հեղինակը, բնիկ Մարաշցի, 1933-էն ի վեր ծանօթ է գրական հրապարակի միայն իր «Սարսափներու գիրքը» թարգմանութեամբ, «Նիրվանա» քերթումաներու հատորով, ինչպէս նաեւ «Ծիածան» գրական-գեղարուեստական հանդէսի հրատարակութեամբ։ Այժմ կու տայ իր քսանամեայ մանրակրկիտ պրպտումներուն փառապրասակը՝ պատմական այս շատ շահեկան երկը, որմէ հատուածներ կանխաւ լոյս տեսած էին Պէյրութի թերթերուն մէջ։

« Հայերը Լիբանանի մէջ » հատորին պատրաստութիւնը երկար տեւած է. հեղինակը մեծ համբերութեամբ քննած է պաշտօնական հին թղթածրարներ, կադմաքստեան հին թղթածրարներ, թերմած է մատենապետական ցանկեր, թերմած է Հաստատութիւններու եւ Առաջնորդարաններու արձանագրութեանց տոմարներ, խօսեցուցած է հին սերունդի մարդիկ եւ անոնցմէ թանկագին յիշատակներ հաւաքած. ուղղակի կամ նամական գրութեամբ յարաբերութեան մէջ մտած է իր հայ եւ օտար պատմաբաններու, ուսուցչապետներու եւ այլ մտաւորականներու հետ (որոնց անունները յիշատակուած են յառաջարանին մէջ), կրէիլ եղածին չափ լուրջ ու կատարեալ ուսումնասիրութիւն մը հանրութեան ներկայացնելու տենչով :

Պր. Սիսակ Վարժապետեան լիովին
յաջողած է իր ձեռնարկին մէջ:

Հրատարակութիւնը կատարուած է Լիբանանահայ նախապատերազմեան (1914) զաղութի կողմէ, իրրեւ համայնքային ձեռնարկ, հովանաւորութեամբ Լիբանանի երեք հայ յարանուանութիւններու կրօնական պետերուն, որոնց գնահատական նամակները կը գրուեն զրքին առջին էջերը :

Առաջին մասը (էջ 1-39) ներածական բնոյթով մը երկու անջատ բաժանումներով կը ներկայացնէ համապատկերը հնդդոյն դարերէն մինչեւ 1700 թուականը ղէպի Սիւրիա եւ Լիբանան եկած հայ դադթականութեանց, ինչպէս նաեւ նկարագրութիւն մը Պէյրութ քաղաքին՝ նախապատմական շրջաններէն մինչեւ մեր օրերը :

Հեղինակին համաձայն, յիշատակելի ատաղին հայ դաղթականութիւնը Սիւրբիոյ հիւսիսային մասին մէջ՝ տեղի ունեցած է 539-ին, մեր Քրիստոսկիոր հայրապետին օրով, երբ Խոսրով Պարսից արքան զրաւեց Անտիոքն ու Եդեսիան: Երկրորդ դաղթականութիւն մը կատարուած է Յովհ. Օմեկցիի օրով, 726-ին. երրորդ մը Ժ. զարուն, Խաչիկ կաթողիկոսի ժամանակ: Այնուհետեւ հայերը Կիլիկիա հաստատուած՝ տակաւ կը թափանցեն նաեւ Լիբանան, ընդհանրապէս ցամաքէն՝ Հալէպ - Դամասկոս - Պէյրութ, կամ Իսկէնտէրուն - Անտիոք - Թարսուս - Թրիփոլի - Պէյրութ ճամբով. քիչ անդամ ծովէն՝ Կիպրոսի վրայով:

Ինչպէս կը նշմարուի, հեղինակը ժլատ է նկատմամբ Լիբանանահայ հին պատմութեան, « որու մասին չօգտփելի տուեալներ չունինք » կը յայտարարէ : Ընդհակառակը, մենք կը խորհինք թէ կ'արժէր քիչ մը աւելի խորանալ այս մարզին մէջ ու ցայտեցնել ինչ ինչ կարեւոր շրջաններ, ինչպէս է, զոր օրինակ, Մեծն Տիգրանի ժամանակամիջոցը : Վ. Ե. Քատունի՝ հեղինակին ուղղուած նամակով մը (հրտ. էջ 11-14) կը յանձնարարէր ծանրանալ Մեծն Տիգրանի գործին վրայ, քաղելով անկէ հայ եւ արաբ յարաբերութիւններու կանխագոյն պատմութիւնը : Դժբախտաբար հեղինակը անտեսած է այդ մասը, նկատելով զայն իրբեւ նիւթ առանձին ուսումնասիրութեան :